

7. Պատւիրակութիւնը լայն իրաւասութիւն կունենայ բանակցելու Համաձայնական Պետութեանց և Սաղազութեան Համաժողովին հետ և հետապնդելու՝ Համաժողովին ներկայացուած Յիշատակագրին սահմաններուն մէջ հայկական դատի լուծումը:

8. Պատւիրակութիւնը ինքը կը նշանակէ, երբ պէտք ըլլայ, վերոյիշեալ պետութեանց մօտ Հայաստանի դեսպանները: Եթէ կառավարութիւնը պէտք զգայ նոյն պետութեանց մօտ քաղաքական առաքելութիւններ զրկելու, նախապէս կը ստանայ այդ մասին Պատւիրակութեան հաւանութիւնը:

9. Պատւիրակութիւնը, նման կառավարութեան, իր գործունէութեան համար պատասխանատու է Ամբողջական Հայաստանի Սորհրդարանին:

Գ. Խորհրդարան. — 1. Հանրապետութեան ներկայ Սորհրդարանը սոյն համաձայնագիրը վաւերացնելէ ետք, երբ անոր հիման վրա կազմուած նոր առժամանակեայ կառավարութիւնը կը ձեռնարկէ իր պաշտօնին, ինքզինք լուծուած կը հռչակէ՝ տալով իր օրէնսդրական իրաւունքները առժամանակեայ կառավարութեան և պարտք դնելով անոր վրա շուտով մշակել ընտրութեանց հրահանգը և ընտրել տալ Ամբողջական Հայաստանի Սորհրդարանը:

2. Ամբողջական Հայաստանի Սորհրդարանը, որը իսկապէս նախա-Սորհրդարան (Prés-Parlement) մըն է, կը գործէ մինչև Սահմանադիր Ժողովի (Constituent) գումարումը, որ միմիայն կարելի է հայկական դատին լուծումէն և հայկական հողամասերու գրաւումէն ետք:

3. Սորհրդարանը կը բաղկանայ ընդամէնը 80 անդամէ, որոնց կէսը կընտրեն արեւմտահայերը և միւս կէսը՝ Արևելեան Հայաստանի Ժողովուրդը:

4. Նկատելով, որ Թիւրքահայաստանը գրաւուած չէ տակաւին, և արեւմտահայ Ժողովուրդը մեծ մասամբ երկրէն դուրս կը գտնուի, արեւմտահայոց մասին ընտրութիւնները կը կատարուին երկրի մէջ և այլուր գտնուող բոլոր արեւմտահայերու կողմէ, ուր որ հնար է: Արտասահմանի մէջ քէշարկող արեւմտահայերը այսպէսով յանձնառու եղած կը նկատուին, ինչպէս պէտք է յայտարարուի կանխաւ, Հայաստանի քաղաքացիներ դառնալու:

5. Սորհրդարանը օրինաւորապէս իր առաջին նիստը կը գումարէ, երբ ընտրուած արեւմտահայ ներկայացուցիչներու առնւազն երեք-չորրորդը և Արևելեան Հայաստանի ներկայացուցիչներուն նոյնպէս երեք-չորրորդը հաւաքուած ըլլան:

Գ. վաւերացում և հրապարակում ներկայ համաձայնագրի. — Ներկայ համաձայնագիրը այժմու Սորհրդարանին կողմէ վաւերացուելէ և երկու կողմէ լիազօրներու ստորագրութիւնը ստանալէ ետք՝ կը ստանայ օրէնքի ոյժ և կը հրատարակուի:

Հրատարակութիւնը կը կատարուի բանաձևով մը, որուն մէջ կը շեշտուի թէ նախկին Թիւրքահայաստանն է, որ կազմած է իր կառավարութիւնը և անոր միացած է Անդրկովկասի մէջ իրականապէս (de-facto) գոյութիւն ունեցող Արևելեան Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, թէ Երևանը ընդունուած է իբրև առժամեայ մայրաքաղաք և թէ Ամբողջական Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլայ նախապէս Թիւրքիոյ մաս կազմող Հայաստանի քաղաքներէն մին»:

Այս ծրագրից տարօրինակ էր թէ՛ իր ոգով և թէ՛ մանաւանդ, էութեամբ. նրա ամէն մի տողից անսահման արհամարհանք էր բուրում դէպի «իրականապէս գոյութիւն ունեցող Հայ Հանրապետութիւնն» ու նրա վարիչ-